

34. Eine Neue Physikalische Enteiweissungsmethode Zur Darstellung Biologische Wirk-samer Substanzen. M. G. Sevag. Bioch. Zt., 273, 419 (1934).
35. Ueber die Natur der Hefe-polysaccharide. M. G. Sevag, Carlo Cattaneo and Lore Maiweg. Ann. der Chemis., 519, 111 (1935).
36. The isolation of the Components of Streptococcal Nucleoproteins in Serologically Active Form. M. G. Sevag, David B. Lackman and J. Smolens. J. Biol. Chem. 124, 425 (1938).
37. The Nucleic Acid Content and Distribution in Streptococcus Pyogenes. M. G. Sevag, J. Smolens, and David B. Lackman. J. Biol. Chem., 134, 523 (1940).
38. Isolation and Properties of Pigmented Heavy Particles from Streptococcus Pyogenes. M. G. Sevag, J. Smolens, and Kurt G. Stern. J. Biol. Chem. 139, 925 (1941).
39. The Conjugation of Streptococcal Nucleoproteins. M. G. Sevag and J. Smolens. J. Biol. Chem. 140, 833 (1941).
40. Inhibition of Catalase by Hydroxylamine and p-Hydroxylaminobenzenesulfonamide and the Reversal of Inhibition by Serum, Crystallizing Serum Albumin, and Hemin. M. G. Sevag, Myrtle Shelburne, and M. Ibsen. J. Biol. Chem., 144, 711 (1942).
41. Immuno-Catalysis (Book), M. G. Sevag. Published by Charles C. Thomas, Springfield, 111. 272 pages + XV, (1945).
42. The Role of Bacterial Enzymes in Immunity. M. G. Sevag. J. Bact., 36, No. 3, 256, (1938).
43. Eine Proteinfreie Immunologische Wirksame Substanz aus Eiklar. M. G. Sevag and Charles V. Seastone. Zt. Immunitätsf., 83, 464 (1934).
44. Ueber die Antigen Beziehungen Zwischen der Rickettsia Prowazeki und den Proteux X19. Richard Otto, Ch. V. Seastone, and M. G. Sevag. Problems der Bakteriologie, Immunitätslehre und experimentellen Therapie. Band III, S. 95-106 (1934).
45. The presence of a Type and Species Specific Conjugated Polysaccharide in Type I Pneumococcus. M. G. Sevag. Science, 87, 307 (1938).
46. The Serological Reactivity of Nucleic Acid. D. B. Lackman, Stuart Mudd, M. G. Sevag, J. Smolens, and Marie Wiener. J. Immunol., 40, 1-20 (1941).
47. The Antigenicity of d-ribonuclease; the Inhibition of the enzyme by its homologous Immune Serum. J. Smolens and M. G. Sevag. J. Gen. Physiol. 26, 71 (1942).
48. Enzyme Problems in Relation to Chemotherapy, «Adaptation», Mutations, Resistance, and Immunity. M. G. Sevag, Advances in Enzymology. Vol. 6, pp. 33-127. 1946. Interscience Publishers, N. Y.
49. Metabolism of Pyruvic acid by bacteria. I. Alteration in enzyme activity of *Staphylococcus Aureus* when grown in the presence and absence of glucose. M. G. Sevag and E. Augustus Swart. Archives of Biochemistry. June 1947.
50. Verfahren zur Abtrennung von Biologisch Wertvollen Bestandteilen aus Pflanzlichen oder Tierischen Stoffen. M. G. Sevag. GER. 684256 (S. 114127 IVz/30h).
51. Process for the Separation of Biologically Valuable Constituents from Starting Materials of Vegetable and Animal Origin. M. G. Sevag. Brit. 481, 924 (March 21, 1938).
52. Method for Separating Constituents of Biologically Valuable Starting Materials. M. G. Sevag. U. S. Patent - 2,118,117 (May 24, 1938).
53. Separation of Hormones from Biological Materials. M. G. Sevag. U. S. Patent - 2,202,029 (May 28, 1940).

Patented Biochemical Preparative Processes

ՅԱԿՈՐ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Ֆիլատելֆիա

ՇՆՈՐՀԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳՆԱՀԱՏԱԿՈՆՆԵՐ

«ԲԱԶՄԱՎԵՊ»-Ի ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻԻ

Պեյրուի, 10 հոկտ. 1947.

Վեր. և Գերյարգելի Խորագրորչի
«Բազմավեպ» Հանդիսարանի, Վենետիկ

Զմեղ ֆիզիքապէս Ստեղծող ու մտաւորապէս ապրեցնող Աստուծոյն փառքը ըլլայ, ամէնէն առաջ ու ամէնէն կարեւոր:

Այն առիթը որ համարձակութիւն կու տայ այսօր ինծի ու շատերուն, ուրախութիւն յայտնելու Զեղի, Հարիւր տարիներէ հետէ, Հայերէն լուսածին գիրերով հրատարակուող «Բազմավեպ»-ի համար, կը նկատեմ երկնային շնորհ մը, որուն բաժնեկցելէ զրկուիլ պիտի նշանակէր զոհը ըլլալ զժրախտութեան մը, հոգեկան ու մտաւորական կեանքի: Այս յայտնուած ուրախութիւնը այնպէս չէ, որպէս թէ ուրիշ մը բարեգէտ վիճակին համար խնդակցութիւն կը յայտնենք, հապա բուն մեզի պատահած բարեխառութեան մը համար, որուն պատճառաւ մեր սրտին տրամադրութիւնները չենք կրնար ստուգել ծածկել: Սա է տարբերութիւնը միայն, որ ամէնքս մեր ուրախութիւնը կը բերենք կը միացնենք կեդրոնի մը մէջ, որ է Ս. Վազար, Վենետիկ, որ կեդրոն ու խորհրդանշանն է արդէն Հայերէնի: Սյուրուան ուրախութիւնը և պատուին արժանին միայն «Բազմավեպ»-ի խմբագրապետին ու խմբագրներունը չէ, ոչ ալ անոր աշխատակիցներուն և ընթերցողներուն, հապա բովանդակ հայ գրողներուն, պիտի աւելցնեմ, համեստ գրիչ մը բռնողներուն, այնպիսիներուն՝ որոնք իրենց կեանքին մէջ գրելու հաճոյքը միայն նա մակի մէջ գտած են, հերիք է որ այն նոյն գիրերով իրենց ապրումները գրոյմած են ինչ գիրերով որ «Բազմավեպ» կը հրատարակուի, այն գիրերուն փառքը կազմելով ու միանգամայն զանոնք կենդանի պահելով, ապրեցնելով:

Այս օրերու հանդէսներն ու յորելինական խանդավառութիւնները արդար են ու իրաւունք է «Բազմավեպ»-ի, վասնզի հարիւրամիակը խօսք չէ, պատրանք չէ, հարիւր տարի առաջուան յիշատակ մըն ալ չէ-լով,

հապա անընդհատ հարիւր տարուան գործ մը, գործ կոթողական ու մշտնջենական: Այո՛, կ'արժէ որ ամէն գրող ու փափաքող ներկայ ըլլար ու անձամբ մասնակցէր, և մտաւորականներու իսկական համագումար մըն ալ տեղի ունենար այս առիթ, սակայն ներկայ պարագաներուն, ամէնուն տրուած չէ այդ բացառիկ շնորհքը, որ բացառիկ բարեխառութիւն մըն է իսկապէս: Բայց ոչ երբեք ներկայ եղողները, միայն ֆիզիքապէս երեւցողներն են. հապա կարելի է ներկայ ըլլալ նաեւ մտքով, հոգիով, էութեամբ, նոյնքան իրականութեամբ՝ թէպէտ ֆիզիքապէս «բացակայ» գտնուելով: Ոչ միայն լեռներէ ու ծովերէ անդին, հապա թերական անսահման տարածութեամբ հեռու եղողներու ներկայութիւնը հաշուի մէջ է այս հանդէսներուն, ուր ներկայ է այս կերպով բոլոր հայ մտաւորականութիւնը: Եւ ինչո՞ւ կարծել միայն ապրողներն աշխարհի վրայ, հապա ապրողներն հոգիներու աշխարհին մէջ ալ: Ո՞վ կրնայ բացակայ համարիլ հսկայ Ալիշանն ու վառվառն անմահ Վաղիկեանը, նմանապէս Եղիշ Գուրեանը, ու դեռ երէկ աշխարհէս մեկնած Նիկոլ Աղբալեանը: Մենք թագադրութեան մը, ձեռնադրութեան մը, կամ հարսանական հանդէսի մը հրաւիրուածներ չենք, որ եթէ բացակայ ենք, զրկուած ըլլանք շողող բաներ տեսնելէ, հապա զրի տօնի հանդէսին, զրի, զրի, այն որ ուր կայ, միասին կը յայտնաբերէ շարժումը, կենդանութիւնը, հոգին, էութիւնն ու իսկութիւնը: Եւ լաւ է այս կարելիութիւնը. ապա թէ ոչ ուր պիտի կրնային հաւաքուիլ այնքան բազմութիւն, մանաւանդ ինծի պէս անձանթ այլ հաւատաւորները, այդ փոքր կղզեակին մէջ կարելի պիտի չըլլար անշուշտ: Բայց ինչպէս Աստուած հիմա որոշ կը գիտէ ամէն հաւաքողներն ուր ուրեք, մեզի համար ալ յայտնի է թէ հայ գրի հնարիչ Ս. Մեսրոպէն սկսեալ դեռ այս Հոկտեմբերին մը, բէն, գիմ հնչել սկսող ու գրելու վարժուող մանկտիք տօնին արժանի հրաւիրուածներն են ու բոլորն ալ ներկայ են:

Սակայն ես տուրք մ'ալ ունիմ անձնաւոր

կան, երախտագիտական, հատուցանելի «Բազմավէպ»-ին այս յարմարագոյն առիթով: 1926-ին Մարտիրոսյ մէջ ձեռագիր պատանեկան զբաղմունքի մը «Յօդ», քաջալեր հանդիսացաւ և հինգ տարի սիրով փոխանակից իր արժէքին ու ծաւալին հաղիւ մէկ հարիւրերորդը կազմող այս խաղալիկին հետ: Ատիկա այնքան բարձր քաջալերանք ու գնահատանք մըն էր, որ եթէ պատանեկան շրջանին հետ փոխուեցան նաեւ զբաղումն ու պարագաներն, այլ ձեռքէս չձգեցի գրիչը, որ ինծի նշանակեց կեանքը ապրելու միակ արժանի պատճառը: Ով որ գրչով հոգեկան բաւարարութիւն չի ստանար, ինչ կը հասկնայ այս կեանքը ապրելէն:

Այս հարիւրամեակը «Բազմավէպ»-ի բարձրանալու աստիճանին թող մէկ սանդխտ մատը ըլլայ տակաւին:

Լաւագոյն կամեցողութիւններով Չերդ Գերապատութեան

ԼԵՒՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

(«Պատանեկան Արձագանգ»-ի խմբագրութիւնէն)

«ԲԱԶՄԱՎԷՊ»-Ի ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Այս թերթին զրկուած մասնաւոր թղթակցութիւն մը կը հաղորդէր թէ Հոկտ. 18-ին և 19-ին Վենետիկի մէջ վայելուչ հանդիսաւորութեամբ տօնուած է «Բազմավէպ» ամսագրի 100-ամեայ յորելեանը: «Պայքար» որ թէեւ իր ներկայացուցիչը չունեցաւ հանդիսութիւններուն մէջ, ինչպէս որ ունեցած էին կարգ մը ուրիշ թերթեր, մշտապէս բարեկամ մը եղած է Միթթարեան հայրերու կողմէ հրատարակուած ոչ միայն «Բազմավէպ»-ին, այլ Հայ Վենետիկի մշակութային ամէն կարգի ձեռնարկներուն: Արդարեւ, ամբողջ դար մը անվհատ ու շարունակաբար հրատարակել «Բազմավէպ»-ի նման զուտ մասնագիտական բովանդակութիւն ունեցող ամսաթերթ մը, քիչերու արուած յաջողութիւն մըն է: Վենետիկի մեր գործունեայ և նուիրեալ Հայրերը ամէն իրաւունք ունին հպարտանալու իրենց այս յաջողութեան հա-

մար, որ խոշոր նպաստ մը եղաւ նաեւ մեր գայութեան, մանաւանդ՝ պատմական ու բանասիրական կալուածներուն:

Աղլանտեանի այս կողմն ալ վերջերս Ամերիկեան ամսաթերթ մը - Տէր Լէթինթիք Մընթլի - տօնեց իր իննսունամեայ յորելեանը ու այդ առիթով երկրին մամուլը արդար հպարտութեամբ ծանրացաւ որքան թերթին պարունակութեան արժէքին, նոյնքան ալ ու թերեւս քիչ մըն ալ աւելի անոր երկարակեցութեան հանգամանքին վրայ:

«Բազմավէպ»-ի կտրած ճամբան, այդ ալ մեր իրականութեան մէջ, պանծալի ու լուսանշող ճամբայ մըն է: Առանց Վենետիկի Հայրերուն յարատեւութեան և անվհատ նուիրումին, ամէն կասկած է վեր է որ ամսաթերթին օրերը համրուած պիտի ըլլային: Գաղտնիք չէ որ մեր մէջ շատ քիչ է թիւը այն հրատարակութիւններուն, որ իրենց կեանքը կը պարտին ընթերցող հասարակութեան գնահատութեան: Թերեւս այդ կարգի հրատարակութիւններ գոյութիւն ալ չունին: Հայ մամուլը միշտ կանգուն մնացած է հրատարակչներուն գերմարդկային գոհողութիւններուն շնորհիւ: Պարզապէս այդ իրողութիւնն իսկ բաւական պիտի ըլլար պանծացնելու Վենետիկի Հայրերուն նուիրումն ու հայ գրին ու զրականութեան ծառայելու անոնց յուսահատիլ չգիտցող ոգին:

Որքան որ ալ հեռուէն ըլլայ, «Պայքար» կը ձայնակցի սրտեռանդն «Բազմավէպ»-ի բարերաստիկ յորելեանին առիթով արտայայտուած այնքան անկեղծ բարեմաղթութիւններուն ու կոչ կ'ընէ գրասէր հայերուն, որ բաժանորդագրուելով «Բազմավէպ»-ին օժանդակ ըլլան անոր յարատեւման ու բարգաւաճման: «Բազմավէպ» արժանի է իր երկրորդ հարիւրամեակը տօնելու իրաւունքին, իսկ թերթին անձնուէր հրատարակիչները՝ մեր բոլորին գնահատանքին ու գուրգուրանքին:

ՊԱՅՔԱՐ

Չորեքշաբթի, Նոյեմբեր 12, 1947.

ՏԻԳՐԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

Խոր ու կակծագին սուգի մը մէջ համակելով Տիգր Տիգրան Պօղոսեան կը բաժնուէր անգարձ իր ընտանիքէն, անցնող տարւոյն Դեկտեմբեր 25-ի իրիկունը՝ անբացատրելի ցաւ մը խառնելով տօնական օրուան ուրախութիւններուն:

«Բազմավէպ» կը յայտնէ հոս իր ցաւակցութիւնները աղնիւ այրի Տիգր Մարկրիտին և իր սիրելի զաւակներուն՝ Տիկ. Ժիւլիէթին, Օր. Պերճուհիին, Պր. Վահէին և բոլոր հեռուոր ու մօտաւոր ազգականներուն:

Ողբացեալը՝ տիպար մը աղնուստիրտ ու հայրենասէր հայու, ծնած էր Տրապիզոն 19 Սեպտեմբեր 1884-ին: Իր նախակրթարանի ուսումնները կատարած է Տրապիզոն Միթթարեանց վարժարանին մէջ, մանուկ հասակէն ստանալով ազգային կրթութեան հետ, ճշմարիտ հայրենասէր և կրօնասէրի ողջ սկզբունքները՝ որոնց հաւատարիմ մնացած է յետոյ իր կեանքի բովանդակ ընթացքին: Իր ուսումները ան շարունակած ու լրացուցած է Սանասարեան վարժարանի մէջ: Բայց նա կը պարձէր միշտ Միթթարեան նախկին սան մը ըլլալուն, ու այդ ախպրութիւնը կը սիրէր գործածել երբ մանաւանդ կը պաշարուէր երիտասարդներու խումբէ մը որ հայրենասիրութեան վրայ կը ճառէին: Արձանագրուած Միթթարեան Նախկին Սանուց Միթթարեան, իր խրախոյսով և միջոցներով կը քաջալերէր ամէն օգտակար ու ազգային ձեռնարկ, առանց մերժելու իր ձեռքէն եկած օգնութիւնը:

Արթնամիտ ու գործունեայ նկարագրի տէր՝ նետուէրով կեանքի ասպարէզին մէջ, տակաւին շատ երիտասարդ ցոյց կու տար իր մտացի առեւտրականի ձիրքը. իր նախասիրած նիւթն էր ծխախոտի վաճառականութիւնը հետեւելով իր հօրը տուած ուղղութեան: Ան փութով կը գառնար մասնագէտ մը ծխախոտի և մանաւանդ արեւելեան ծխախոտի, ու կը հասնէր մինչեւ իսկ ըլլալու Օսմանեան Տէրութեան մէջ, ծխախոտի մենաշնորհին վարիչը: Իր համբաւը այնքան տարածուած էր՝ որ Եւրոպական մեծագոյն առեւտրական տուններ իրեն կը գիւմէին երբ հարկ

ըլլար մեծաքանակ գնումներ կատարել: Բռնած էր ան թրիէստի շուկան, կապելով Եգիպտոսի Մաթոսեան վաճառատունը Եւրոպայի կարեւոր կեդրոններու հետ:

Առաջին միջազգային պատերազմի աղէտներէն աղաթելով իր սիրելի ընտանիքը կը փոխադրէր Խաղիա, միանգամայն շարունակելով իր առեւտրական գործունէութիւնը՝ հաստատուած Եւրոպայի սրտին վրայ: Վերջին համաշխարհային պատերազմը կու գար քիչ մը վրդովել իր ծրագիրները և աղօտացնել իր գործունէութեան փայլը: Բայց անոր անտելիտալի կամքին գիմաց չկրցաւ թուամբ կանգնել, այնպէս որ հաղիւ թէ եկան խաղաղութեան տարիները, ան վերստին ձեռք զարկաւ վերսկսելու իր ընդհատուած գործը, ու այս նպատակով անցաւ ան վերջերս Անգլիա և Ֆրանսա, որպէս զի կազմակերպէ իր նախկին գործունէութիւնը, սակայն անակնկալ մահը խլեց զայն առ յաւէտ իր սիրելիներէն և իր գործէն:

Իր հոգին հիմա կը հանգչի անմահներու լոյսին մէջ, և իր սգաւոր ընտանիքի անդամներու և ջերմասէր զինքը սիրող բոլոր բարեկամներու սրտին մէջ:

